

Ինչպե՞ս կկիրառեի նորագույն տեխնոլոգիաները կրթության մեջ

Միտքը՝ գեղք, հանուն խաղաղ զարգացման

Քանի դեռ կա թռչելու ցանկությունը, թևերն ամենաչնչին խնդիրն են: Ներկայիս ԳՏՀ-ի պայմաններում գաղափարն այն հիմնային հենքն է, որի վրա հիմնվելով՝ կառուցում ենք մտքի ու տեխնոլոգիաների աշխարհը: Կրթական ոլորտն էլ, հանդիսանալով գաղափարների հասունացման օջախը, ամենաշատն է զգում առաջադեմ տեխնոլոգիական լուծումների ներդրման կարիքը: Եվ ի վերջո, տնտեսական զարգացման մեծ ցիկլի կարևոր բաղադրիչն էլ հենց կրթություն-տեխնոլոգիաներ-կրթություն անվերջ զարգացող և ամրապնդվող օղակն է: Այժմ ավելի մանրամասնորեն անդրադառնամ ծրագրիս բաղկացուցիչ մասերին՝ շեշտը դնելով բարձրագույն կրթության որակի բարելավման վրա:

Մեծագույն խնդիր է բուհ-երում տիրող նախաքննական սթրեսն ու հետքննական անտարբերությունը: Ուստի հարցին տրվում է հետևյալ լուծումը: Հատուկ չիպային համակարգերի հիմքի վրա նախագծված փոքրիկ անհատական համակարգեր՝ նախատեսված ուսանողների համար: Համակարգերը, որոնց կանվանենք ուսվահանակներ(տեխնոլոգիական լուծումներին կտամ անուններ ավելի պատկերավոր դարձնելու համար), ստեղծված են դասապրոցեսին կիրառվելու համար: Դասախոսը տեղում տալիս է հարցը, ուսանողն անմիջապես պատասխանում է համակարգի միջոցով, ու շարունակաբար կուտակվող միավորներն էլ ընդհանուր գնահատական են ներկայացնում ուսանողի առաջադիմության վերաբերյալ: Նախ մեծանում է դասապրոցեսի ընթացքում ուսանողի ցուցաբերած զգոնությունը, ճիշտ և արդար կերպով լուծվում է հարցերի և անհարցերի բացակայությունների խնդիրը, ինչպես նաև օնլայն կապ է հաստատվում այն բացակա ուսանողների հետ, որոնք չեն ուզում միավոր կորցնել:

Ներկայացնեմ սմարթփեն կոչվող հատուկ ուսանողական հարմարանքը: Սմարթփեն կոչվող գրիչը պահպանում է իր հիշողության մեջ այն ինֆորմացիան, որը լսում է, հատուկ աուդիո բաժնում, և պահպանում իրենով գրված ինֆորմացիան հատուկ փաստաթղթային բաժնում: Օրվա ավարտին գրիչն իր ինֆորմացիան, որը պահպանվել է չիպի վրա, փոխանցում է համակարգչին, որն էլ համակարգում է ողջ ինֆորմացիան և այն դարձնում հանրամատչելի որոշ տեսողական, լսողական, լեզվական խնդիրներ ունեցող մարդկանց համար. այն է համակարգիչը դառնում է միջանկյալ սարք սմարթփենի և մի 3-րդ սարքի համար, որն էլ պատասխանատու է ինֆորմացիայի՝ հասարակության որոշ զանգվածին մատչելի լինելու համար:

Հաջորդ քայլը պրակտիկ գիտելիքներն ու փորձը ավելի մատչելի և ճշգրիտ դարձնելն է: Ստեղծվում են հատուկ մասնագիտացված ռոբոտներ, որոնք իրենց մեջ ունեն անընդհատ թարմացվող ինֆորմացիա և ծրագրավորված են այս կամ այն գործողությունը լիարժեք իրականացնելու համար, որը, ինչպես նշվեց, անընդհատ փոփոխման ենթակա է: Բժշկական ռոբոտը հատուկ ծրագրավորված է վիրահատական պրոցեսներն իր վրա կրելու համար, և նախօրոք ծրագրավորված քայլերի հաջորդականության խախտումը կամ սխալմունքը ավտոմատ միացնում է նախագուշացման հրամանը: Նույնպիսի ռոբոտներ կարող են ստեղծվել բազմաթիվ ոլորտների համար:

Չգալի է նաև կրթական նյութի սակավության կամ նույնիսկ բացակայության խնդիրը: Հետևյալ խնդրին շատ հաճախ բախվում է հայ ուսանողը. գրքերն ու նյութերը սակավ են կամ ոչ մատչելի լեզվով: Ստեղծել օնլայն տիրույթ, որը հասանելի կլինի և վեբ, և մոբայլ հավելվածային տարբերակով: Հավելվածի բուն եռությունը հետևյալն է. կատարել որոշակի օգտակար աշխատանք քո կարողությունների շրջանակներում, դրա դիմաց ստանալ այն, ինչ քեզ անհրաժեշտ է: Հավելվածը հիմնված է միավորային և բոնուսային համակարգերի վրա: Թարգմանելով որևէ աշխատություն, դասախոսություն, կամ գիրք մեկ այլ լեզվից մյուս լեզվով, տեղադրելով որևէ խնդրի լուծման տարբերակներ, դու ստանում ես համապատասխան միավորներ, որոնց դիմաց օգտվում ես մեկ ուրիշի կողմից առաջարկվող ծառայությունից: Հավելվածն ունի հստակ մասնագիտական ենթաբաժանումներ: Օրինակ մաթեմատիկա բաժնում որևէ օգտատեր կարող է դառնալ օնլայն ուսուցիչ. ըստ վարկանիշի, որը կձևավորվի մյուս օգտատերերի կարծիքների հիման վրա, կավելացվեն ստացվող միավորները: Նշենք, որ միավորներ կարելի է նաև գնել և վաճառել ոչ վիրտուալ տիրույթում: Հավելվածը կունենա նաև պրակտիկ բաժիններ: Ծրագրավորում բաժնում կարելի է աշխատել ուսուցիչ, դրա դիմաց կուտակել միավորներ և վարկանիշ, միավորները փոխարինել դրամով կամ օգտվել մեկ ուրիշի ծառայություններից և այսպես շարունակ: Գլխավոր առավելությունը գումար ունենալու ոչ պարտադիր պայմանն է, և այլընտրանքային <<Ով աշխատի, նա կուտի>> հայտնի ժողովրդական ասացվածքը: Նշեմ, որ հավելվածը կյանքի կոչելը ապագայում առաջնային նպատակներիցս մեկն է, քանի որ այժմ ինքս էլ զգում եմ ինֆորմացիայի աղբյուրների հասանելիության պակաս:

Այսքանով ավարտեմ տեխնոլոգիական գաղափարներիս շղթայի մեկ օղակը, հույս ունենալով, որ ի վերջո կրթությունն էլ կդառնա համակարգված տեխնոլոգիական օղակների լայն շղթա: